

ՇԵՔՍՊԻՐԻ ՄԻԿՐՈ- ԵՎ ՄԱԿՐՈ ՏԻԵԶԵՐՔԸ

ԱՐԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

Հոգվածում դիտարկվում են Շեքսպիրի ժամանակակիցների պատկերացումները միկրոտիեզերքի և մակրոտիեզերքի մասին, որտեղ գործում են կարգի պահպանման օրենքները: Ոչ միայն դրանց խախտումը, այլև շեղումը դրանցից սպառնում է տիեզերական քաոսի թագավորությամբ:

Առաջարկվում է Համլետի՝ «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել» հայտնի արտահայտության նոր մեկնաբանություն:

Բանալի բաներ – Շեքսպիր, Մաքիավելլի, Հուլիոս Կեսար, Հին Հռոմ, Ժան Բոդեն, միկրոտիեզերք, մակրոտիեզերք:

Շեքսպիրի ժամանակներում կար տեսակետ, թե աշխարհը հնարավոր է ներկայացնել համընդգրկուն օրենքների միջոցով: Ոչ հաղորդյալների հալացքից թաքուն հատուկ նշանները կարող էին հնարավորություն տալ կռահելու իրերի ու տիեզերքի ճշմարիտ իմաստը: Հրատարակվել են գրքեր, որոնցում պատկերվել են իրերի կապը և մարդկային հարաբերությունները կարգավորող հանգուցային հերոսներ ու կերպարներ:

XVI դարի պոետ Էդմունդ Սպենսերը «Օրհներգ երկնային գեղեցկությանը» գործում կոչ էր անում. «Նայի՛ր այս անընդգրկելի Տիեզերքի նախագծին»:

Որքան էլ տարօրինակ է, սակայն XVI դարի մարդն իր առօրյա կյանքում վճիռներ կայացնելու համար կարիք է ունեցել իմանալու, թե ինչպես է կառուցված տիեզերքը, ինչ տեղ է զբաղեցնում ինքը մյուս կենդանի արարածների շարքում, ինչպես է ինքը կապված մոլորակների, արևի հետ և այլն: Տիեզերքի մասին նվազագույն գիտելիքներ ունենալով՝ Եղիսաբեթի ենթակաները դատել են բացառապես տիեզերական կատեգորիաներով: Դատելու համար, թե որքանով է հասարակությունը, որում իրենք են ապրում, «անսխալ», անհրաժեշտ է եղել իմանալ, թե ինչպես է կազմված բուսական աշխարհը (հիշենք «Համլետի» այն տեսարանը, որում Օֆելյան բաժանում է ծաղիկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը), ինչ կարգեր են գործում կենդանիների աշ-

խարհում, ինչպես են փոխներգործում աստղերը:

«Այդ աշխարհը նախնական է ու վերջնական՝ որպես աստվածային արարումների հատկանիշների խստագույնս ամրագրված նվիրակարգ»¹:

Միլթոնը տվել է «Տիեզերքի սկզբնավորման» հետևյալ պատկերը. «Անեզր օվկիանոս, ուր թագավորում է վաղնջական գիշերը և չորս տարրերի անընդմեջ մարտը՝ նրանց նախնական վիճակով: Միայն արարչագործության մեջ է այդ թշնամանքը վերափոխվում համաձայնության, ի հայտ են գալիս երկիրը, ջուրը, կրակը և օդը»:

Նրանից 200 տարի առաջ տիեզերքի նվիրակարգը նկարագրել է հայտնի իրավաբան Ջոն Ֆորտեսքյուն. «Այդ կարգի մեջ հրեշտակը տեղակայված է հրեշտակի վրա..., մարդը՝ մարդու, կենդանին՝ կենդանու, ծուկը՝ ձկան... Այսպես (համայն Տիեզերքում) չկա մի բան, որ համակված չլինի կարգի կապակցումով»²:

Հայտնի է, որ Շեքսպիրն ընդունել է իր ժամանակի տիեզերաբանների հայացքները միկրոտիեզերքի՝ «մարդու» և մակրոտիեզերքի՝ «տիեզերքի» կապի վերաբերյալ: Ավելին՝ Ա. Բարտոշևիչի տեսակետի համաձայն. «Տիեզերական ամբողջությունը նման է հսկայական ծավալներով ընդլայնված մարդկային մարմնի: Մարդը տիեզերքի պատճենն է, միկրոտիեզերք. այս պատկերները, որ հնագույն ժամանակներից յուրացրել էր Վերածնության մշակույթը, պատկանում են Շեքսպիրի արվեստի հանգուցային թեմաների դասին»³:

«Շնորհիվ այնպիսի հատկանիշի, ինչպիսին համահունչությունն է, Շեքսպիրը մշտապես բարձրացնում էր երաժշտությունն ամենաբարձր պատվանդանին: «Հարմոնիայի թագուհի» երաժշտությունը նա օգտագործում էր գեղեցիկի իդեալի որոնումների և հաստատման համար: Եվ պատահական չէ, որ մարդ-միկրոտիեզերքի և տիեզերք-մակրոտիեզերքի գնահատման համար նա դիմում է հենց երաժշտությանը: Ոլորտների երաժշտության բազմակի հիշատակման մեջ հարկ է տեսնել ոչ միայն իր ժամանակներում վերածնված անտիկ, մասնավորապես պյութագորացիական գաղափարի արձագանքները, այլև ինչ-որ միասնական, համընդհանուր հարմոնիայի առկայություն տեսնելու

¹ **М. А. Барг.** Шекспир и история. Москва, Наука. 1979, стр. 84.

² **М. А. Барг.** Шекспир и история. Москва, Наука. 1979, стр. 84. Համասման մտքեր է հայտնել նա- V դարի փիլիսոփա Դիոնիսիոս Արեոպագացին, ով նվիրակարգի հիմք է համարել մեկընդմիջտ տրված «ազնվագարմության աստիճանը». ջուրը երկրից ավելի ազնվագարմ է, ոսկին՝ պղնձից, սուտակը՝ աղամանդից - այլև:

³ **А. В. Бартошевич.** Для кого написан “Гамлет”. Москва, “Театр”, № 5, 1992, стр. 128-142.

ձգտում: Շեքսպիրը կապում էր այդ հարմոնիան երկրային և երկնային երաժշտության հետ՝ մի փոքր ավելի բարձր դասելով երկրորդը, սակայն երբևէ միմյանց չհակադրելով»⁴:

«Տրոիլուսը և Կրեսիդան» պիեսում Շեքսպիրը գրեթե տառացիորեն վերարտադրել է արարչագործության պատկերը.

Ուլիսես

Ինքը երկինքը, մոլորակները և այս կենտրոնը
 Իրենց կարգն ունեն, առաջնությունը,
 Տեղն ու ընթացքը, ձևն ու օրենքը, ներդաշնակումը:
 Դրա համար էլ փառավոր արևն իր ազնվափայլ
 Բարձրության վրա, բազմաձիգ գահին,
 Իշխում է մյուս մոլորակները, բուժիչ հայացքով
 Ուղղում է նրանց մտքերը հոռի
 Եվ արշավասույր, հանց թագավորի հրովարտակը
 Թռչում է դեպի չարը ու բարին հավասարապես...

(I, 3)

(հատվածները բերված են ըստ Հենրի Սևանի թարգմանության
 մեքենագիր օրինակի, 1973 թ., Երևան)

Շեքսպիրի ժամանակակիցը՝ Ժան Բոդենը, իր «հորդորումների» ժողովածուի մեջ գրել է. «Եթե անդրադառնանք բնության..., երկրային արարածների առանձնահատկությանը, ապա կհայտնաբերենք մշտական, ներդաշնակ կապ, որ հակադրությունները կապակցում է անքակտելի հանգույցներով... Այսպես՝ նկատում ենք, որ հողը և քարերը կապակցված են կավով ու կրով... Ձկների ու թռչունների միջև թռչող ձկներն են: Մարդկանց և կենդանիների միջև՝ կապիկները...»⁵:

Այս կարգի պահպանումը նշանակում էր «բնության օրենքների» պահպանում, որ ընդհանուր էին համայն գոյության համար: Ոչ միայն դրանց խախտումը, այլև շեղումը դրանցից սպառնում էր տիեզերական քաոսի թագավորությամբ:

⁴ Я. И. Хачикян. Шекспир об искусстве. Ереван, Советакан грох, 1977, стр. 14.

⁵ М. А. Барг. Шекспир и история. Москва, Наука, 1979, стр. 86.

Ուլիսես

Բայց երբ եղկելի մոլորակները
 Հանդգնեն դուրս գալ իրենց բնական շրջապտույտից՝
 Ինչպիսի՜ աղետ կարող է ծագել,
 Ո՞վ կգուշակի վախճանը երկրի:
 («Տրոիլոսը և Կրեսիդան», I, 3)

Այսպիսով, համապատասխանությունների տարբեր հարթությունների միջև գոյություն ունի այնպիսի ներդաշնակություն, որ բավական է՝ «մեծ շղթայի» մի օղակում կարգը խախտվի, արձագանքի պես հաջորդում է այն, որ «աններդաշնակությունն ու խառնաշփոթությունը տարածվում են ամբողջ տիեզերքով, նրա բոլոր ոլորտներով»: Այսպես, օրինակ՝ արևի խավարումը (ներդաշնակության խախտում) աղետներ է կանխագուշակում երկրի համայն կենդանի արարածների համար (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ և այլն): Եվ հակառակը, եթե կեցության օրենքները խախտված են մարդկանց միջև, անմիջապես դրան արձագանքում են երկինքն ու երկրի ընդերքը: Օրինակ՝ Մակբեթը սպանում է իրեն հյուրընկալված Դունկան թագավորին: Կարդում ենք.

Լենոքս

Այս գիշերն ինչպե՞ս փոթորկալից էր:
 Այնտեղ, ուր կայինք, ծխնելույզները հողմից վար ընկան:
 Ասում են, օդում ողբալի ճիչեր լսելի էին
 Եվ տարօրինակ մահվան գոչյուններ...

Ապա՝

Եվ գուշակումներ՝ սոսկալի ծայնով՝
 Սասանումների ու խառնակությանց,
 Որ աղետալից այս դարի թուխսից նոր են դուրս գալու:
 Խավարի թռչունն ամբողջ գիշերը վայեց անդադար:
 Ասում են, երկիրն ինքն էլ ջերմ ուներ և դողդողում էր:

(II, 3)

Մեր առջև է Շեքսպիրի ժամանակակիցների գիտակցության մեջ իշխող համընդհանուր ճշմարտության մի օրինակ, այն է՝ ի վերուստ հաստատված կարգի ամեն մի խախտում լի է կործանարար հետևանքներով և, ի վերջո, տիեզերական քաոսի հաստատման վտանգով:

Ուկիսես

...երբ խախտենք կարգը,

Չենք կարող երբեք խույս տալ քառսից:

(«Տրոիլոսը և Կրեսիդան», I, 3)

Դանիո թագավորության մեջ քառս հաստատվեց, երբ Էլսինորում խախտվեցին կեցության բազում բնական օրենքներ՝ օրինական թագավորի սպանություն, այրի թագուհու շուտափույթ ամուսնություն թագավորի եղբոր հետ, Օֆելյայի դավաճանությունը... Եվ ի հետևանք այս ամենի՝ ուրվականի հայտնվելը, որ, հողում հանգիստ առնելու փոխարեն, շրջում է երկրով մեկ ու սարսափ տարածում մարդկանց մեջ:

Գիտենք, որ Շեքսպիրը Դանիո նեխած թագավորության այս տիեզերական խառնաշփոթն ընդգծել է Համլետի խոսքերով. «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել» (“The time out of joint”):

Այս արտահայտությունը կարելի է մեկնել այլ կերպ: Պիեսում (Էլսինորում) խախտված է սովորական ժամանակային կարգը: «Հարություն» է առել ոչ միայն Համլետի հայրը, այլև Հորացիուսը, մի պոետ, ով ապրել է ավելի քան հազար տարի առաջ: Սա Համլետին է՛լ ավելի լուրջ հիմքեր է տալիս ասելու. «Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել»: Այսպիսով, Շեքսպիրը հերթական անգամ հուշում է, որ պիեսում տեղի ունեցող իրադարձությունները դուրս են տրամաբանության սովորական ընթացքից. այստեղ գործում են միկրո- և մակրո տիեզերքի օրենքները:

Իր պիեսներում Շեքսպիրը բազմիցս է ընդգծել այն գաղափարը, որ կարգի խախտումը բոլոր հարթություններում կործանարար է պետության համար: Թագավորական գահի շուրջ նման շեղումները նա ցույց է տվել Ռիչարդ Երկրորդի և Ռիչարդ Երրորդի, զավակների, ծառաների երախտամոռությունն ու հավատարացությունը՝ Լիր արքայի, թագակրի ստոր սպանությունը՝ Մակբեթի, քաղաքացիական խժոժությունները՝ Հենրի Վեցերորդի օրինակներով: Ուրեմն՝ խնդիրը միայն Դանեմարքան չէ: Նա գոյություն է ունեցել շատ ավելի վաղ ժամանակներում (համենայն դեպս՝ Հին Հռոմի ժամանակներից) և գոյություն կունենա հետագայում էլ: Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել և՛ անցյալում, և՛ ներկայում: Իսկ այդ իրադարձությունները համեմատելու, ընդհանրացնելու համար կարիք կա կողմնակի դիտորդի: Արա համար է Շեքսպիրին անհրաժեշտ եղել Հորացիոն:

Մաքիավելլին գրել է. «Հին դասականությունը մշակել է գծապատկերներ ու մեթոդներ, որոնք օրինակելի կարող են լինել բոլոր ժամանակների համար: Նկատի ունենալով, որ մարդիկ ի բնե անփոփոխ են (պատմությունը կրկնվում է)՝ կարող ենք ասել, որ պատմությունը կարող է բերել գործնական օգուտ...»: Այլ կերպ ասած ճակատագրական հեղաբեկումներում միտքը մշտապես անդրադառնում է անցյալի փորձին՝ լինի դա իր, թե ուրիշի փորձը, պատմությանը՝ «ոչ միայն իբրև հույսի և խիզախության ակունքի», այլև որպես «մտային նյութի» շտեմարանի՝ տեղի ունեցողը լուսաբանելու և ապագան կանխատեսելու համար:

Այն իմացությունը, որ ձեռք էին բերել Շեքսպիրի ժամանակակիցները՝ ծանոթանալով անտիկ աշխարհի հետ, զարմանալի էին իրադարձությունների հանդեպ հայացքների նորությամբ: Անհրաժեշտություն ծագեց համեմատելու սեփական բարքերը «նրանց բարքերի» հետ, զուգադրելու արդիականությունը հին ժամանակների հետ: Եվ հռոմեացի պոետն իր ահռելի իմացությամբ և փորձով ավելի քան համապատասխանում էր այդ դերին:

Այն հարցը, թե ինչու է դրամատուրգն իր մենարկն սկսում Հավերժական քաղաքից, ունի պարզ բացատրություն. «Համլետը» նա սկսեց գրել անմիջապես «Հուլիոս Կեսարից» հետո և դեռևս դրանում պատկերված իրադարձությունների տպավորության տակ էր (տե՛ս Հորացիոս, Էպոդոս 7):

Հորացիոն Հռոմի քաղաքացի է, կայսրության օրինական տիրակալի՝ Հուլիոս Կեսարի հանդեպ մահափորձի վկան, ու պատահական չէ, որ նա հիշում է հենց Հռոմը, հենց այդ շրջանի Հռոմը: Նա քաջածանոթ էր նման պալատական հեղաշրջումների հետևանքներին, այդ իսկ պատճառով էլ խոսում է քառսի մասին շատ ավելի վաղ, քան Համլետը. «...դա գուժում է մի մեծ սասանում մեր պետության մեջ»:

МИКРОКОСМ И МАКРОКОСМ ШЕКСПИРА

АРА ЕРНДЖАКЯН

В статье рассматриваются представления современников Шекспира о микро- и макрокосме. Английский драматург считал, что весь мир есть единая система, части которой тесно взаимодействуют, и вся система в целом подчинена общим ритмам и циклам, имеющим свои индивидуальные проявления.

Предлагается новая трактовка известной реплики Гамлета: “Порвалась связь времен...”.

Ключевые слова – Шекспир, Макиавелли, Юлий Цезарь, Древний Рим, Жан Боден, микрокосм, макрокосм.

MICROCOSM AND MACROCOSM OF SHAKESPEARE

ARA YERNJAKYAN

The article reviews the ideas about macro- and microcosm shared by Shakespeare's contemporaries. The English playwright regarded the whole world as a single system, whose parts cooperate closely, while the system as a whole is subordinated to common rhythms and cycles having their individual manifestations.

We offer a new interpretation of Hamlet's famous cue: "The time is out of joint..."

Key words – Shakespeare, Machiavelli, Julius Caesar, Ancient Rome, Jean Bodin, microcosm, macrocosm.